

Նոր Մարաշ, Նոր Սիւ, Նոր Ատանա, Թրատ, Ամանոս և այլն:

ԼԵՌՆԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆ, որ իր մեջ հաշվում է մեկ կողմից Անթիլիասը, Ճյունին, Ճիպելլը, Ղազիրը, Պիքֆայան, իսկ մյուս կողմից Ալեյը և Համմանան, ընդամենը ունենալով շուրջ 1500 հայություն:

ՊԵՔԱԱՅԻ ԼԵՌՆԱԴԱՇՏԻ ՇԻՋԱՆԸ, Լիբանանյան և Անդր-Լիբանանյան լեռների միջև, Դամասկոսի սահմանին մոտեցած վայրերը: Այս շրջանը հետզհետե աճող կարևորություն է դառնում, նախ այնտեղ ձեռնարկվող պետական անտեսական գործերի պատճառով, ապա և Սանջազից գաղթած հայերի կարևորագույն մասի Այնճար տեղավորվելով՝ նույն Պեքաայի դաշտի դեպի Դամասկոս երկարող ծայրի վրա: Պեքաայի հայկական համախմբումը բաժանվում է հերթ-շրջան կեդրոնացումների: Նախ Զահլե, որ մեծ պատերազմից ի վեր հայ գաղթականության կեդրոն եղավ, ապա Պալալիք ու Բալազ, իբրև կեդրոններ երկրագործական աշխատանքների և վերջին տարիներին երկաթուղային պետական աշխատանքների: Ավելի կարևոր է Շրոքայի շրջանը, Բեյրութից Դամասկոս երկարող պողոտայի ճիշտ Պեքաա դաշտի մուտքի վրա: Այստեղ հայկական մի նոր ավան է աճել, հող են գնել և տուն ու պարտեզ են շինել հայերը. Շեռ-րայի այս շրջանի մեջ կան շատ ավետարանական հայեր, իրենց հատուկ դպրոցով ու եկեղեցիով:

Պեքաայի կարևորագույն հայկական կեդրոնացումն է նորահաստատ հայկական Այնճար գաղթականներ, Բեյրութից Դամասկոս գնացող ճանապարհի զրեթն կեսի վրա, Բեյրութից 55 կիլոմետր հեռավորությամբ: 1800 հեքտար հող է հայկական Այնճարը, որ Մուսա լիւ է կոչվում: Հողի 92 հեքտարը հատկացված է գաղթականների շինության: Այստեղ նստել է նախկին Մուսա Լեբան ժողովուրդը. Բիթիսա, Հաջի Հաբիբի, Յոդուն, Օլուզ, Խըտըր Պեկ, Վազքի և Քեպուրի, ընդամենը մոտ 5500 անձ: Վերջին տարին, Հ. Բ. Զ. Միության ձեռնարկով և Հայ Կարմիր խաչի գործակցությամբ հաստատվեց ջրհան մի մեքենա, հայկական ամբողջ գաղթականներին ջուր հայթայիթելու

համար: Իրենց հաստատումից ի վեր թեև բավական նեղություններ կրեցին Այնճարի հայերը, բայց հետզհետե բարելավվում է տնտեսական վիճակը, երկրագործության աճումով և ճարտարարվեստական նոր գործերի հաստատումով Պեքաայի շրջանի մեջ:

Լիբանանի թեմի կարևոր մի մասը դարձել է նաև Հարավային Լիբանանի շրջանը, մեծը հաշվելով Սուր և Սալտա հայկական նոր գաղթականներ: Սուրի և շրջակայքի մեջ տեղավորված են Սանջազից գաղթած բնակիչները, հախկին Այնքաաների, Բեյլանի, Սուլուզ-Օլուզի, Ֆարթալլի, Նարկիզլիքի և այլ շրջանների, ընդամենը 2200 հոգի: Այնճար ծովից 55 կիլոմետր հեռու և 900 մետր բարձր է, իսկ Սուր գտնվում է ճիշտ ծովազերքը, Լիբանանի և Պաղեստինի սահմանագլուխի մոտ: Շրջապատված է գլխավորապես իսլամ և Տուրքի ժողովուրդներով: Երկրագործական բերրի մի շրջան է, ունի իրեն հատուկ վազող ջուր՝ ոռոգումի համար: Հայերն այստեղ սկսեցին աճեցնել փոքրիկ պարտեզներ: Սուրի հայ գաղթականությունը երեք մասերի է բաժանված: Նախ Սուր քաղաքի մեջ հաստատվածները, ապա Բեյրութից Հալաբ գաղթող ճանապարհի վրա Պաս կոչված կայանը, և երրորդ, այս վերջինիցս չորս կիլոմետր հեռու և պողոտայից ներս, մի բլուրի վրա, Բաշիտի կամ Բաս-յուկ Այն կոչված վայրը:

Սանջակից Լիբանան հաստատվող հայերի համար, թե Այնճարի և թե Սուրի շրջանները, հողերը գնել և վրան տուններ շինեց ֆրանսական կառավարությունը: Թեև Սուրի հողերը վերջնականապես հայերին չէին տրված, բայց լիբանանյան նոր կառավարությունը շնորհեց այդ բաժինն էլ:

ԴԱՄԱՍԿՈՍ.—Հնադույն ժամանակներից ի վեր Դամասկոսը եղել է հայության կայան: Դեպի Նրոսապեմ գնացող ուխտավորներ այնտեղ գտնում էին մի «հոգեհուն»։ Քաղաքի սուրբ Սարգիս եկեղեցին, արևելյան պարսպի ճիշտ կից, իր շուրջ հավաքել է հայ գաղթականությունը: Մեծ պատերազմին, Դամասկոս ամենից ապահով և աննդառատ քաղաքն էր հայ տեղահան ժողովրդի համար:

ԲՅՈՒՋԱՆԴ ԵՂՅԱՆ
«Արևմուտք»

ՀԱՅԵՐԸ ԷԼԱԶԻԶԻ ՄԵՋ

Տիարպաքրեն կզրին «Ժամանակ»-ին, թե տեղվույն Առաջնորդը վերջերս այցելած է էլազիդ, ուր բավական մեծ թիվով հայություն կա հավաքված քիչ մը ամեն կողմե և այն-

տեղի ասորիներու հին մատրան մեջ Ս. Պատարագ մատուցած և քարոզած է խուսն բազմության մը ներկայության, որոնցմե շատեր կարտասվին: Առաջնորդ Տ. Հայրը

կատարած է նաև խաշահանգիստ, մկրտած է 115-ի չափ մեծ ու փոքր անձեր և կատարած 12 պսակադրություն, ինչպես նաև այցելած է հիվանդներուն և յուրաքանչյուրին բացատրած է, թե ինչ է Պատարագը, հաղորդությունը, խոստովանանքը և մկրտու-

թյունը, որովհետև անոնք բոլորովին մոռցած էին այս բաները և կամ բնավ չէին սորված: Արարողությունը մըն ալ կատարված է գերեզմանատան մեջ, ուր հայ ննջեցյալները առանց քահանայի թաղված են:

(«Արաբ» 8 նոյեմբեր, 1947 թ.)

ՊԱՂՏԱՏՅԱՆ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՅՈՒՆ

Պաղտատ մոտավորապես ունի 10.000 հայություն մը, որուն հազարը տեղացիներ են: Ամբողջ Միջագետքի մեջ 15-16.000 հայեր կան, 6.000-ը ցրված Պանրայի, Քերուքի, Մուսուլի և շրջականերուն մեջ:

Պաղտատ ունի չորս վարժարաններ. — «Թարգմանչաց»՝ 380 աշակերտով, «Մվաճյան»՝ 580, Սըլեխի վարժարանը՝ 200 և Նորաշեն վարժարանը՝ 180 աշակերտով:

Սըլեխ և Նորաշեն նորակառույց հայկական կեդրոններ են, գաղթականական կայաններ չեն հյուսվակներով: Առաջինին մեջ գեղեցիկ, պարտեզներով շրջապատված, տունները քիչ թիվ չեն կազմեր. երկրորդը կրկին կոկիկ, մաքուր թաղերով, բայց ավիլի համեստ:

Ներգաղթի արձանագրված են 9.000

հոգի, որոնցմե 1000-ը օրերս Հայաստան կմեկնին Բեյրութի ճամբով:

Արձանագրվողներու մեջ կան 40 բնիկ պաղտատցի հայեր:

Երկու տարի առաջ, Հայաստանի համար ձեռնարկված հանդանակության արդյունքը եղած է 660 անդիտական ոսկի, որ դրված է Հայաստան:

Ներգաղթող կարողալներու ի նպաստ պարահանդես մը կազմակերպված է:

Իրաքի մեջ 30 հոգի կազմված ժողովին 20 անդամները Պաղտատեն են, 7-ը՝ թեմերեն և 3-ը՝ կրոնավոր: Իրաքի բոլոր հայության կողմն ընտրված է:

Կուսակցական պայքար չկա ներկայիս. դադուքը հանգիստ է: Իսկ հայերու և արաբներու հարաբերությունը շատ համերաշխ է:

Թ.Ղ.Ա.Ա.Կ.3

(«Ժողովուրդ» 22 հոկ. 1947 թ.)

ԿԻՊՐՈՍԱՅՈՒԹՅԱՆ ԹԻՎԸ

Կառավարական մարդահամարի կեդրոնական գրասենյակի հաղորդագրությամբ մը համաձայն կիպրահայերու ճշգրիտ թիվն է 3659, որմե 1768-ը ալբեր և 1891-ը կիներ են:

Ներկայացված թիվն 3155-ը հայախոս լուսավորչականներ են, 248-ը՝ օտա-

րախոս լուսավորչականներ, իսկ 255 հայեր ալ ուրիշ դավանանքի կհետնին:

Զանազան քաղաքներու մեջ բաժանումը հետևյալ պատկերն ունի. — Նիկոսիա՝ 2424, Լաոնաքա՝ 896, Լիմասո՝ 222, Ֆամակուստա՝ 123, Պաֆոս՝ 14, իսկ Կիոնե՝ 7 հոգի:

(«Նոր օր» 28 հոկ. 1947 թ.)

